Ռուբեն Սևակ

Հայրը

«Հայր մեր, որ յերկինս...»

Աստանդական մալեհեր, ցուրտ գիշերով, բուք բորան,
Մթին փողոց մը, քարի նստարանի մը վրան,
Իրեն խարխուլ կողին վրա ընկողմանած էր արթուն,
Երբ ապաստան փնտռեց հոն նիհար տըղա մը անտուն:

Խավարի մեջ նայվածքներեն իրա՛ր զարկին, շաչեցան...
Ծերը հեռու քաշկռտեց հիվանդ մարմինն իր անձայն.
Ճանչցե՛ր էր. բայց չի կրցավ ըսել՝ «Որդյա՛կ մոլորուն,
Զավա՛կս ես, զոր լքեցի անոթության օրերուն...»

Թշվառության հյուրընկալ նստարանին վրա քարի,
Կյանքի խավար գիշերով, Մարդն ու Աստվածը բարի,
Պատահաբա՛ր, կող կողի, երբոր զիրար տեսնային.

Եհովան իր լուսեղեն պըսակին մեջ, երկնային՝
Չեր ամչնար ըսելու թշվա՛ռ, անտե՛ր, խե՛ղճ Մարդուն.
«Ե՛ս ես քու հայր Արարիչդ, ամենակալ, մշտարթուն...